ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/06

ք. Երևան

«12» օգոստոսի 2020թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Մելքումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էդուարդ Սահակյան Սամսոնի» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Էդուարդ Սահակյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ներքին (ինտերիերի) դիզայնի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3,995,000 (երեք միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011031938
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար
Ն. Սելքումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էդուարդ Սահակյան Սամսոնի» Ա/Ձ
ք. Երևան, Նազարբեկյան 1բ. Բն. 31
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570064523440100
ՀՎՀՀ 27953903
Տնօրեն
Է. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«12» 08 2020թ. կնքված
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/06 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79931200/1	Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	3,995,000	1	Ք. Երևան, Հ. Հակոբյան 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 45 օրացուցային օր:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ***

ՀՀ Երևան քաղաքի Հակոբ Հակոբյան N 3 հասցեում գտնվող Ս.Մերգելյանի անվան «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 4-րդ մասնաշենքի, 5-րդ հարկի ճարտարապետական լուծումների մշակման աշխատանքների

N	Անվանումը	Նկարագիրը
1	2	3
1	Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղադրման վայրը	Ճարտարապետական և ներքին հարդարման լուծումների ենթակա կառույցը գտնվում է ՀՀ Երևան քաղաքի Հակոբ Հակոբյան N 3 հասցեում «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 4-րդ մասնաշենքի, 5-րդ հարկում՝ 685.2քմ ընդհանուր տարածքով, խոշորաբջիջ միավորներով կազմավորված միջանցքային տիպի գործարանային տարածքում: Տարածքում նախատեսվում է ստեղծել «Հայկական տեխնոլոգիական ՀԱԲ»: Այն իրենից ներկայացնում է բազմաֆունկցիոնալ աշխատանքային, քննարկումների,հանդիպումների, շնորհանդեսների, միջազգային ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերի իրականացնելու վայր, որտեղ ժամանակակից ճարտարապետական լուծումներով և ներքին հարդարմամբ ստացված նորարարական դիզայներական լուծումներով կստեղծվի միջավայր, որտեղ տեխնոլոգիական ընկերությունները կհիմնեն իրենց կազմակերպությունները, կյանքի կկոչվեն նոր գաղափարներ և կստեղծեն տեխնոլոգիական արտադրանքներ: Տարածքը ենթակա է ամբողջական նորագույն ճարտարապետական լուծումների: Հիմնական տարածքից բացի անհրաժեշտ է լուծումներ առաջարկել նաև շքամուտքի և միջանցքի համար:
	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	**Նախատեսվում է.** • Տարածքի տեխնիկական վիճակի ուսումնասիրության արդյունքում մշակել 685.2քմ մակերեսով արտադրական տարածքի ինտերիեր դիզայնի և ճարտարապետական լուծումների առաջարկ • Առաջարկի մեջ ներառել տարածքի ներքին սառը և տաք ջրամատակարարման, ջեռուցման, էլմատակարարման (այդ թվում պահեստային-ավտոնոմ), գազամատակարարման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման,

հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, սառեցման և հովացման, տեխնիկական անվտանգության համակարգերով, մասնաշենքի արդիական ներքին և արտաքին հարդարումով,

- Առաջարկը համալրել հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, վերհան սարքեր կամ վերելակ (***համապատասխան նորմատիվ փաստաթղթերով նախատեսվող այլ միջոցառումներ)***,
- նախագծի ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ:
- Նախագծի մեջ ներառել շքամուտքի դիզայներական լուծումները

Վերանորոգվող հատվածում նախատեսվում են տարածքների բաժանումը՝ հետևյալ նախապատվությամբ.

. Նախասրահ- այս հատվածում պետք է տեղակայված լինի ընդունարան՝ որտեղից կկարգավորվի ՀԱԲ-ի ընթացիկ աշխատանքները:

. Բաց աշխատանքային տարածք- Սա հիմնական աշխատանքային հատվածն է, որը նախատեսված է առավելագույնը 50 մասնակցի համար: Անհրաժեշտ է դիզայներական և թեմատիկ լուծումներով միմյանցից այնպես առանձնացել որ լինենով նույն տարածքում՝ չխանգարեն միմյանց: Այն հագեցված է լինելու համակարգիչներով:

. Հանդիպումներ անցկացնելու փոքր սենյակ (մինչև 7 հոգի)- Այստեղ նախատեսվում է անցկացնել փոքր քանակով քննարկումներ, սենյակը հագեցված է լինելու սեղանով, աթոռներով և պռոեկտորով:

. Հանդիպումներ անցկացնելու մեծ սենյակ (մինչև 30 հոգի)- Այս սենյակում անցկացվելու են մեծ քննարկումները, առավել ընդունելի տարբերակ կլինի եթե այս սենյակը տեղակայված լինի պատուհաններով հատվածում, և սենյակի մի պատը ամբողջությամբ պատուհաններ լինեն: Սենյակը կահավորված է լինելու մեծ ուղղանկյուն սեղանով, աթոռներով, պռոեկտոր և այլ տեխնիկական սարքավորումներով:

. Բաց շնորհանդեսներ և քննարկումներ անելու հատված-1- այս հատվածը նախատեսված կլինի առավել հանրային միջոցառումներ կազմակերպելու համար, շարժական կոնստրուկցիաների միջոցով հնարավոր լինի տեղաշարժել

. Սանհանգույց- 1

. Խոհանոց- 1

. Հանգստի սենյակ - 1

. Համակարգչային սպասարկման սենյակ՝ 1

. Տեսազանգեր և անհատական հետախոսազրույցներ անցկացնելու համար հատուկ թեմատիկ 3 խցիկ

. Պատուհաններ- Տարածքի պատուհանները առաստաղից մինչև հատակ են, ուստի հաշվի առնելով նորագույն լուծումները անհրաժեշտ է պատուհանների որոշ հատվածներ օգտագործել որպես հատուկ պատուհանագոգեր և ստեղծել առանձին աշխատանքային հատված

. Առաջին բուսական ծածկույթով առանձնացված հատված, որտեղ անդամները կարող են հանգստանալ և միաժամանակ աշխատել

. Տարածքում առանձնացել մեծ գրատախտակի կամ տեղեկատվական պատի հատված, որտեղ կլինեն ինֆորմացիա տեղի ունեցող միջոցառումների և հանդիպումների մասին, դա կարող է լինել նաև լեդի տեսքով:

Համաձայն ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարության առաջադրանքի տարածքում նախատեսվում է 70 աշխատակցի,

Լրացուցիչ

Նախատեսել կանաչ զանգված /տնկիներ, ծաղկամաններ,
Նախատեսել որ ապակյա կոնստրուկցիաների վրա հնարավոր լինի հատուկ մարկերով գրառումներ անել

		Գեղարվեստական ձևավորման ոճը / ընդհանուր ուղղվածությունը/ խորհրդակցության սենյակները և հանդիպումների դահլիճները պետք կահավորվեն համապատասխան ձայնային և լուսավորության համակարգերով սեմինարների, ժողովների և այլ հանդիպումների անցկացման համար • ***Հայ-թեք*** Բարձր տեխնոլոգիաների ոճը, բնորոշ է ուլտրա-ժամանակակից նյութերի, առավելագույն ֆունկցիոնալ տարրերի, մասնավորապես կահույքի և անսովոր ձևերի /ֆորմաների/ օգտագործմամբ. • ***Գոթական*** Այն առանձնանում է իր նրբագեղությամբ, էլեգանտությամբ: Հսկա պատուհանների, գույնզգույն վիտրաժներ, լուսավորման էֆեկտներ: Արդյունքը լինում է վառ և թեթև ինտերիեր, կենտրոնացումը սրածայր ձողերի, պատուհանների և սրածայր կետերի վրա: Ոճի բնութագրիչներից են նաև սրակամար դռները ու լուսամուտները. • ***Ճապոնական ոճ*** Ոճ, որի ժամանակ ոչինչ չի գերբեռնում ուշադրությունը, տարածքի կառուցվածքը հանգիստ է և հստակ: **Գունային նախապատվությունները** *(նախագծողի առաջարկությամբ և պատվիրատուի համաձայնությամբ)*
	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	Հիմնավորում՝ - ՀՀ կառ.27.06.2019թ <ՀՀ 2019թ պետական բյուջեում և ՀՀ կառ.2018թ դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որ.մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին> թիվ 783-Ն որոշում
	Նախագծման փուլերը	**Ճարտարապետական և ներքին հարդարման լուծումների փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** Նախագծային աշխատանքների իրականացում «**Աշխատանքային Նախագիծ**» 1 (մեկ) փուլով
	Նախագծի կազմը	**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»** **<u>Նախագծի լրակազմում նախատեսվող (մշակվող) փաստաթղթեր</u>** 1. Ընդհանուր բացատրագիր • Ճարտարապետական լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր, 3D մոդելավորում, ինտերիերի մշակում) • կոնստրուկտիվ լուծումներ • կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 2. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր)՝ • Էլ.մատակարարման (էներգախնայող), կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, օդամատակարարման, գազամատակարարման համակարգեր, կապի ցանցեր, տեսահսկման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, կենսապահովման համակարգեր և այլն ***(նախագծողի կողմից անհրաժեշտ համարվող այլ համակարգերի նախատեսում)*** 3. Ճարատարապետական առաջարկի հիման վրա իրականացվելիք Շինարարական աշխատանքների ամբողջական և մանրամասն նախահաշիվ Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ 11.Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ)

	Այլ պահանջներ	**Համաձայնեցումներ** **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ - էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Թերությունների ակտի մշակում համակարգչային ծրագրով: Թերությունների ակտի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)** Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 45 օրացույցային օր **<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>** Ըստ անհրաժեշտության ***(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Թերությունների ակտը վերադարձվում է լրամշակման»),*** Թերությունների ակտի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: Վերջնական դիզայներական լուծումը պետք է իր մեջ ներառի նաև ընթացիկ նորոգման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011031938
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար
Ն. Մելքումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էդուարդ Սահակյան Սամսոնի» Ա/Ձ
ք. Երևան, Նազարբեկյան 1բ. Բն. 31
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570064523440100
ՀՎՀՀ 27953903
Տնօրեն
Է. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«12» 08 2020թ. կնքված
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/06 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

հրավերով նախատեսված գնափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79931200/1	«Ներքին (ինտերիերի) դիզայնի ծառայություններ»	-	-	-	-	-	-	-	-	3,995,000	3,995,000	3,995,000	3,995,000	3,995,000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011031938
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար
Ն. Մելքումյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էդուարդ Սահակյան Սամսոնի» Ա/Ձ
ք. Երևան, Նազարբեկյան 1բ. Բն. 31
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570064523440100
ՀՎՀՀ 27953903
Տնօրեն
Է. Սահակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«_____» _____2020թ. կնքված
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/06 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____Պ
այմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«_____» _____2020թ. կնքված
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/06 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն